

# ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

պատմական դրամա հինգ արարածով

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԱՆՑԻ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԵՐ

ՏԻԳՐԱՆ . . . . .	Քաղաւոր հայոց:
ԶԱՐՈՒՀԻ . . . . .	Քաղուհի հայոց:
ՏԻԳՐԱՆՈՒՀԻ . . . . .	Տիգրանի քոյրը:
ԵՐՈՒԱՆԴ . . . . .	Զօրավար, Տիգրանի մերձաւորը:
ԳՈՀԱՐԻԿ . . . . .	Տիգրանուհու նաժիշտը:
ԱԺԿԱՀԱԿ . . . . .	Քաղաւոր մարաց:
ԱՆՈՅՇ . . . . .	Քաղուհի մարաց:
ՎԱՐՊԱԳԷՍ . . . . .	Խորհրդական Աժդահակի: Վեց այլ խորհրդականներ:
ԿՈՒՐՈՒՇ . . . . .	Քաղաւոր պարսից:
ՊԱՀԱԿՆԵՐ:	
ՄԱՐԿՊԵՏ:	
Մերձաւորներ, Քրմապետ, Գանձապահ, Սուրհանդակ, Զինւորներ:	

Գործողութիւնը կատարուած է Արմաւիրում և Ն'րատանում:

# ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԻԱԾ

## Տիգրանի պալատը

Բեմի հտեից լսում են ձայներ՝ «կեցցէ Տիգրան թագաւոր» որ կրկնում են մի քանի անգամ: Մտնում է Տիգրանը պատերազմական զգեստով՝ չաղթութիւնից վերադարձած: Դահլիճում սպասող պալատականները նույնպէս կեցցէներով են ընդունում թագաւորին:

## ԵՐԵՒՈՅԹ I

ՏԻԳՐԱՆ, ԲԻՄԱՊԵՏ, ԳԱՆՁԱՊԱՀ, ՄԵՐՁԱԻՈՐՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Ողջոյն բոլորիդ:

Շնորհակալ եմ, կարող ատուածներ,

Ձեր օգնութեամբ միայն չաղթեցի

եւ իմ թըշնամուն: Ձեզ եմ պարտական

իմ ժողովրդի անհուն ցընծութիւն

եւ զոհութիւնը, որոնց ձայներից,

Ինչպէս մըրրկից, հըպարտ եւ ուրախ

Ահա ծածանւում են չաղթանակի

Դրօշակները պալատիս առջև

Բազմութեան զըլխին: Ձեզ եմ պարտական

եւ իմ սիրելի մերձաւորներիս

Համակըրական այս խրոխտ պեցցէն,

Որից ոչ սակաւ հըրճւում է իմ սիրտն:

Մեծդ քրմապետ, սուրբ մեհեաններում

Հայր Արամազդին թող մատուցանեն

Գերընտիր զոհեր և օրհներգութեամբ  
 Երնորհակալութեան մեր յայտնութիւնը  
 Երկինք հասցընեն, մինչև երկնային  
 Հօր բնակարանը: Բարի ասուածը  
 Մեզ չի մոռանալ և ապագայում:

ՔՐՄԱՊԵՏ

Լքում եմ, արքայ:

ՏԻԳՐԱՆ

Իսկ դու պատական

Իմ գանձապահըս, թըշնամուց առատ  
 Բողոր աւարի արծաթ ու ոսկուց  
 Բաժին կը հանես ամբոխի համար,  
 Անձրևի նըման կըշաղտաս նորան  
 Աղքատ չըքաւոր խուժանի աւաջ:  
 Իսկ նոքա օրոնց սիրելիները  
 Սուրբ հայրենիքին զոհարեւելով  
 Արինաթաթախ ընկան դաշտերում,  
 Մըխիթարեցին արդէն արքայի  
 Կարեկցական ջերմ արտասուքներով  
 Եւ առատաձեռն խոստումներով,  
 Որոնց կատարելն յանձնում եմ դարձեալ  
 Ես քեզ, մըտերիմ իմ գանձապահս:

ԳԱՆՁԱՊԱՀ

Պատրաստ եմ տէր:

ՊԱՆԱՏԱԿԱՆ (ցոյց տալով դէպի փողոց)

Մեծական արքայ...

ՏԻԳՐԱՆ

Այս քնչ սուրհանդակ է այսպէս արագ  
 Կարծես բազէի թևերից կըպած  
 Դէպի արքունիք ձիով սըլանում:  
 (մտնում է համբաւարերը):

## ՀԱՄՐԱԻԱՐՅԵՐ

Տէր, Մարատանից մի շքեղագործ  
 Եւ հեծելազոր փոքրիկ զօրագունդ  
 Գալով մօտենում է այս պալատին  
 Մի ալեորի առաջնորդութեամբ:

## ՏԻԳՐԱՆ

Ո՛հ, այդ ի՞նչ սառսուռ անցաւ ձեր միջից:  
 Կարծես բոլորդ շանթահար եղաք  
 Այս անակընկալ սորա համբաւից.  
 Անվայել է քեզ այդպէս զունատել.  
 Թէպէտ ամենքըս մենք արդէն  
 Յոգնած և ուժասպառ ենք,  
 Բայց կարողութիւն մենք դեռ կունենանք  
 Երկու Աժդահակ սրբի անցնելու:  
 Գնացէք նոցա դիմաւորելու,  
 Ինչպէս ընդունել հարկ է դաշնակցի,  
 Պատգամաւորին—պատուով, յարգանքով:

(Գճում են):

## ԵՐԵՒՈՅԹ II

## ՏԻԳՐԱՆ (մենակ)

Ի՞նչ խորհուրդ ունի անըսպասելի  
 Այս բանը—արդեօք պիտի խանգարէ  
 Եւ թունաւորէ մեր ցընծութիւնը,  
 Թէ բարեգուշակ մի լուր է բերել  
 Կըրկնապատկելու մեր խընդութիւնը:  
 Աժդահակը իմ դաշնակիցըն է,  
 Թէպէտ մազից է միայն կախած  
 Մեր հին և խախուտ դաշնակցութիւնը:  
 Բայց ահա նոքա:

ԵՐԵՒՈՅԹ III

ՏԻԳՐԱՆ, ՄԵՐՁԱՒՈՐՆԵՐ Լ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ, ԱԺԳԱՀԱԿԻ ԽՈՐՀՐԳԱԿԻՑԸ

ԽՈՐՀՐԳԱԿԻՑԸ

Արքայ Տիգրանին

Իւր հաւատարիմ դաշնակցից ողջնյն:

(Տիգրանը գլխով շնորհակալութիւն է պատճում)

Մըշտըն ջենաւոր երջանկութիւն է

Ցանկանում Մարաց արքան դաշնակցին:

ՏԻԳՐԱՆ

Եւ մեր կողմանէ հանդիստ երկար կեանք

Ողջոյն կը մաղթէք դուք մեր թաղակցին:

Բայց երկբայութիւնն ու կասկածանքը

Խիստ նեղում են ինձ և ես անհամբեր

Ըստատում եմ: Եուտ յայտնեցէք դուք ինձ

Ի՞նչ խորհուրդ ունի այս յանկարծական

Ձեր զալուստը:

Ձը լինի՞ դարձեալ գազանարարոյ

Դըրացիներըդ, ամենազաժան

Աւերիչ ժանդախտը Մարաստանի,

Նոր արշաւանքով ասպատակել են

Ձեր երկիրը: Եւ դուք իմ օգնութեան

Ըզգալով կարիք...

ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Ըսկիւթացիներն

Եւ պատերազմը, մեծափնտ արքայ,

Այդ երկուսըն էլ չիշեցնում են

Մեզ արեան գետեր, և դոցա անունն

Անպատշաճ է տալ այսօր մանաւանդ:

Ո՛չ, մե՛ծդ Տիգրան,

Պատերազմի բօթ չեմ բերել ինձ հետ,

Այլ մի շատ խոնարհ, նւաստ աղերսանք

Ես պիտ առարկեմ իմ թագաւորից,  
 Ընդունիր, արքայ, իմ աիրոջ նամակը,  
 Այստեղ է նորա սրտի փափագը:

(Տիգրանը կարդում է նամակը)

Ո՛վ դուք, երկնային հըզօր ասուածներ,  
 Համաձայնութեան կայծեր վառեցէք  
 Մեր դաշնակցի վեհ վըսեմ հոգու մէջ.

Քող չ'աղոտանայ, չը մարի երբէք  
 Խընկելի հուրը բարեկամութեան,  
 Ինչպէս անընդհատ մընում է անշէջ

Բոցավառ հուրը ձեր զոհարանի  
 Քող պողպատ դառնան մեր ամուր կապերն  
 Եւ անընկճելի, ինչպէս երկինքը,  
 Եւ փայլուն ու ջերմ ինչպէս արեգը:

(Աւանձին) նա կը համաձայնէ:

## ՏԻԳՐԱՆ

Բարեկամութեան

Անոյշ մի հոտ է բուրում նամակից.

Սիրելիներս, Աժդահակ արքան

Կամենալով մեր դաշին հաստատել

Եւ հիացած քրոջ իմ Տիգրանունու

Վայելուչ դէմքով և բարի հոգով

Քախանձանքներով խընդրում է ինձնից

Ձը մերժել նորան. այլ սալ կընութեան

Բոլորից սիրւած պարկեշտ իմ քրոջ,

Մեծ օրիորդին: Ես իմ կողմանէ

Յօժար եմ ուրախ, մընաց նորա կամքը,

Համաձայնութիւնը: Մեր այս յարգելի

Մերունուն այստեղ դուք մեծարեցէք,

Իսկ ես — ես կ'երթամ Տիգրանունու մօտ:

(Գնում է):

# Տեսարան Բ.

Մի ալլ սե՛նե տկ

## ԵՐԵՒՈՅԹ IV

ՏԻԳՐԱՆ (մեծակ)

Նա հասունացած է վաղուց արդէն:  
Արդէն ժամանակ է ճաշակելու.  
Քաղցրը պտուղներն ամուսնութեան:  
Յարմար առիթըն ինքն իրան եկաւ.  
Նորան զնահատել անհրաժեշտ է,  
Երկպառոյիկ օգուտս նս կը զօրանամ.  
Ունէի աջ թև, ձախըս էր պակաս.  
Յիմայ զոյգ թևով կը թևաւորւեմ.  
Թէ երկինքըն էլ ինձ ջատագովէ,  
Այնժամ Հելլանդա, մօտ է քո վախճան,  
Ողբալի օրհասս Ահա և քոյրըս  
Օ', գեղեցկութեան երկնային տիպար:

## ԵՐԵՒՈՅԹ V

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Նզբայրս, ինչո՞ւ այդպէս շտապով  
Դու ինձ կանչեցիր:

ՏԻԳՐԱՆ

Միթէ ազանիս

Դեռ հասած չէ քեզ ցանկալի լուրը.  
Այժըմ երևի նա ողջ քաղաքում  
Բերանից բերան անցնում է արդէն:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Նոր համբաւ, եղբայր:

## ՏԻԳՐԱՆ

Կամ ուրախալի  
Կամ թէ վշտալի քեզ համար համբաւ.  
Սակայն ինձ համար—ինձ համար անչափ  
Փափագելի է:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ի՞նչ օտարոտի բան է այդ, եղբայր,  
Որ նա քեզ համար կարող է լինել  
Անչափ ցանկալի, սակայն ինձ համար  
Վըշտաբեր միայն:

## ՏԻԳՐԱՆ

Սիրելի քոյրիկ,

Մարաց արքայի այն զօրագունդը  
Մի այլևորի առաջնորդութեամբ  
Որ ներկայացել է այսօր այստեղ,  
Քո համաձայնութեան են միայն կարօտ,  
Որ քեզ իրանց մեծ թագուհի կոչեն...  
Այդ արշալոյսը, որից քո դէմքը  
Շառագունելով դարձաւ ծիրանի,  
Գուշակում է ինձ մի պայծառ արեւ  
Ապագայ կեանքիդ: Ինձ ասան, քոյրիկ,  
Ձէի՞ր ցանկանալ դալիք օրերըդ  
Անցընել այնպէս, ինչպէս թագուհին  
Քո եղբոր հետ: Ո՛հ. ինչո՞ւ այդպէս խիստ  
Դու շրփոթւեցիր, սիրելի քոյրիկ:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Խոստովանում եմ: Այս երկնքի տակ,  
Սիրելի եղբայր, մի՞թէ մի հատ կոյս  
Պատահել է քեզ, ձեր զոյգի նըման

Երջանիկ կեանքին որ նախանձայոյզ  
 Զը լինէր երբէք, ամուսնութիւնը  
 Իւր նւիրական իղձը չ'համարէր:

ՏԻԳՐԱՆ

Շընորհակալ եմ, սիրելի քոյրիկ —  
 Այդ խելօք անկեղծ խօսքերի համար:  
 Պատուելի հիւրը քո հաւանութեան էր միայն մնում  
 Իսկ այնուհետև երբոր դու արդէն  
 Համաձայնեցիր...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Օ՛հ. ես հեռանամ  
 Իմ հայրենիքից: Ո՛չ, Տիգրան, երբէ՛ք:

ՏԻԳՐԱՆ

Այդ Բ՛նչ եմ լրտում:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Սիրելի եղբայր,  
 Ես երջանիկ և զոհ եմ արդէն  
 Այստեղ, հարազատ այս երկրնքի տակ,  
 Այստեղ հայրական տանիքի ներքոյ  
 Ազգականներիս ուրախ շըբանում:  
 Այստեղ կամենում եմ միայն ապրել,  
 Այստեղ միմիայն կուզէի մեռնել:

ՏԻԳՐԱՆ

Տիգրանուհի —

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Օ՛հ. այստեղ միմիայն  
 Կարող եմ տեսնել մըխիթարական  
 Ու պայծառ դէմքեր, միմիայն այստեղ  
 Կարող եմ խընդալ, այստեղ միմիայն  
 Լինել երջանիկ:

## ՏԻԳՐԱՆ

Բայց մերժե՛լ նորան —

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Եթէ քո քրոջ բազաւորութիւնը  
Քանկ է քեզ համար, թէ դա է միայն  
Ըստիպում քեզ ինձ այդպէս յորդորել,  
Օ, աղաչում եմ, մի՛ շարունակիլ,  
Քո՞ղ դու այդ մըտքերը...

## ՏԻԳՐԱՆ

Է՛հ դու իմ հոգեակս,  
Դու անփորձ ես դեռ, կարծում ես այլ ուր  
Զը կայ խընդութիւն: Եթէ տեսնէիր դու Եկրատանը  
Ս', նա դըրախտ է, զարնան միջոցին  
Կատարեալ օրրան է վայելչութեան:  
Ողջ արեւելքի թագակիրները  
Միշտ աչքը տընկած այն եօթըներանգ  
Եւ բըլուրաղիր քաղաքի վերայ...

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ես ի՛նչ եմ անում այնպիսի դըրախտ...

## ՏԻԳՐԱՆ

Այնտեղ կը լինես դու մեծ թագունհի  
Ամբողջ պետութեան: Եւ Աժդահակը,  
Իմ դաշնակիցը զոյգ աչքի նըման,  
Քեզ կը խնամէ և կը փայփայէ,  
Եւ դու երջանիկ...

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ո՛չ, ո՛չ, թագաւեր,  
Այնտեղ չաւիտեան դըժբախտ կը լինեմ,  
Ողջ կեանքըս այնտեղ կը լինի միայն  
Վըշտերի մի շարք: Արեւը գըլխիս

Կերևայ խաւար: Սէր, յոյս, մըխիթար  
 Օտար կը մընան տանջւած իմ հոգուն  
 Կը կարճեմ օրերս ինչպէս սարագիր  
 Քըշւառ և լըքեալ: Այնտեղ կը թըմընեմ,  
 Ինչպէս մի ծաղիկ, պարարտ, մայրենի  
 Հողիցըն հանւած: Այնտեղ կը թռչնեմ  
 Եւ դեռ վաղօրօք կիջնեմ գերեզման:  
 Ազալում եմ ես...

ՏԻԳՐԱՆ

Քո մերժումը, քնք,

Բարի հետեանք չէ կարող բերել  
 Քո հայրենիքին: Այդպէս անպայման  
 Նորան պաշտելով, անդիտակցարար դու վէրք կը բանաս  
 Նորա սրբաի մէջ. մեր կապակցութիւնը  
 Դու կը խորտակես, դու կը կործանես  
 Բարեկամական մեր խախուտ կապերը.  
 Իսկ այնուհետեւ այս անդորրութեան  
 Եւ խաղաղութեան, որ վաստակեցինք  
 Մենք հազարների թախած արիւնով,  
 Կը փոխարինէ ճակատամարտի  
 Բուռըն փոթորիկ, կը իւր, կոտորած.  
 Մեզ այնուհետեւ դուցէ այցելեն. (լռութիւն)

(Տիգրանունին լալիս է)

Իսկ ընդունելով՝ դու կամրապընդես  
 Մեր դաշնակցութիւնը. մենք երկոքեանս  
 Կը զօրեղանանք և մեր անունը  
 Աշխարհի բոլոր ծայրերում կը չիշուի  
 Ահով ու դողով: Մեր գըլուխները  
 Մինչև իսկ եթերք մենք կը հասցընենք,  
 Ինչպէս այն Աւագ և Կըրտսեր Մասիս  
 Եւ հըւշակաւոր հըպարտ Հելլադան  
 Իւր գուռգութեան դահիցը իջած,  
 Ինչպէս մի ըսարուկ իւր տիրոջ ատաջ

Կամ թէ կախարդած չար օձի նըման  
Իողողջուն լեզուով մեզ կը պաղատէ  
Խընայել իրան: Ահա նամակը.  
Լըսիր իմ հոգեակ:

«Յայտնի է քեզ, սիրելի եղբայր, որ սիրելիների բազմանալուց  
աւելի շահաւետ բան չը կայ մեր ասուածապարզե կեանքում, նամա-  
նաւանդ եթէ հզօր, քաջ և բանիմաց են բարեկամները: Այսպիսով  
արտաքին խռովութիւնները անկարող են յարձակել մեզ վերայ: Ուստի  
այս բոլորը ի նկատի ունենալով՝ ես կամեցայ աւելի խորագոյն և հաս-  
տատուն դարձնել մեր սէրը:» (Տիգրանուհին լալիս է):

«Բայց այս կը լինի երբ ինձ կնութեան կը տաս Հայոց մեծ օրի-  
որդին, քո քրոջ Տիգրանուհուն, և եթէ կը բարեհաճէք, նա կը լինի  
Թագուհիների Թագուհի: Ո՞ղջ եղբր, մեր սիրելի եղբայր և Թագակից:»  
(Լուսթիւն) Ինչո՞ւ յուսահատ հեկեկում ես դու.

Եթէ դրժարին ծանրը է այդքան  
Թողնել հայրենիք, թող լինի այնպէս,  
Ինչպէս կամքըդ է, ըստիպում չեմ քեզ:  
Երթամ ես ուրեմըն...

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ըսպասիր եղբայր: Ասան ինձ, խընդրեմ  
Միթէ մերժելով Մարաց արքային՝  
Նորա զայրոյթը մենք կը յարուցանենք.  
Միթէ այսպիսով ձեր բոլոր կապերը  
Կը քակեն բնաւ:

## ՏԻԳՐԱՆ

Զը գիտեմ, քոյրիկ:

Իմ ասելիքը արդէն ասեցի:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Եթէ այդպէս է, եթէ մի կնոջ  
Մերժումից միայն կախած է հազար  
Մարդկանց անողոք ճակատագիրը,  
Ես չեմ կամենում... ես համաձայն եմ

Թող Ասուածը տայ, որ փոշմանելու  
Առիթ չ'ունենանք:

ՏԻԳՐԱՆ

Ենորհակալ եմ, սիրելի քոյրիկ,  
Անմահները տան, որ արտասուքը,  
Որ ջերմ հոսանքով երեսդ թրջեց,  
Լինէր առաջին վերջին արցունքը:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Երթամ Զարուհուն իմ վիշտը չայտնեմ.  
Բայց թւում է ինձ, որ դու քրշում ես  
Աքսորում հեռու ինձ օտար աշխարհ,  
Որտեղից էլ դարձ չը կայ ինձ համար:  
Կամ թըւում է ինձ, որ հեռանալով  
Իմ հայրենիքից՝ վերջին հըրածեշտ  
Կեանքիս եմ տալիս. կամ թւում է ինձ,  
Ինչպէս բանտարկեալ պիտի տւայտեմ  
Ես շրջթայակապ, անյոյս, մոռացած:  
Ո՛հ. այդ քո դէմքը թող չը մըռայի—  
Ես համաձայն եմ. ես պարտաւոր եմ  
Համաձայնելու: (Գնում է):

ԵՐԵՒՈՅԹ VI

ՏԻԳՐԱՆ (մենակ)

Ո՛վ հայր Արամազդ,

Դու, որ աշալուրջ հեռեում ես միշտ  
Իմ խրաքանչիւր ձեռնարկութեան մէջ,  
Այս անգամ, դարձեալ դու բարեխընամ  
Ողորմած եղիր: Քո գըթութեանը  
Ապաւինում եմ ես այսուհետե—  
Զըլինի զըղջման մի դառըն առիթ  
Ինձ ներկայանայ անըսպասելի:  
(Մտնում է Զարուհին Տիգրանուհու ձեռքիդ բռնած):

## ԵՐԵՒՈՅԹ՝ V II

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԶԱՐՈՒՀԻ

ԶԱՐՈՒՀԻ

Քարասիրտ Տիգրան, մի՛թէ չեն շարժում  
Քեզ այս խըղճուկի արտասուքները  
Եւ հեկեկանքը, Թեակըտուր ես  
Արեւ սոխակիս—

ՏԻԳՐԱՆ

Իսկ Տիգրանու հին

Մի՛թէ, նա այնքան փոփոխամիտ է:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ո՛չ, ո՛չ, թագաւոր, այդպիսի կոչման  
Արժանի չէ նա:

ԶԱՐՈՒՀԻ

Իսկ ես ասում եմ՝

Թէ երկու աչքով էլ սա կոչը լինի...  
Մաշած ու փրտած այն ալեորին  
Կրնութեան տալու մենք աղջիկ չունինք,  
Եւ թողնելու չեմ...

ՏԻԳՐԱՆ

Եթէ շօշափեն

Կրնոջ պատիւը, թող նա չը թողնէ.  
Եթէ իւր կրթօքից կաթնակեր մանկան  
Գան, յափըշտակեն, թող նա չը թողնէ.  
Բայց թէ չղացած խանգարես գործը  
Որ պիտի աճէ մեր ամբողջ ազգի  
Եւ բարգաւաճման և բազդի համար,  
Միևնույնը չէ ամպերին ասես—  
Ցըրւեցէք, ամպեր, ձեր անձրևները

Պիտանի չեն մեզ, երաշտութիւնը  
 Համատարած միշտ թող թագաւորէ  
 Աշխարհիս վերայ, թող ամենեւին  
 Զընջւենք սովամահ:  
 Բայց թէ քաղցր է ձեզ համար այդքան  
 Տեսնել մարդկային արեան վրտակներ—  
 Արէք ինչ կուզէք, և ես այլ ևս  
 Հեչ մի գործ չունեմ ձեզպէս ինքնասէր  
 Եւ անհեռատես կանանց սրբոի հետ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Մի յուզւիլ այդպէս,  
 Սիրելի եղբայր: Ես պտուիրել եմ  
 Արդէն պատրաստւեն ինձ ուղեկցելու  
 Իմ նաժիշտներըս: Նոքա ինձանից  
 Բաժանելու չեն, ես էլ - նոցանից:  
 Եւ կուղևորւենք հէնց նոյն իսկ այսօր:

ՏԻԳՐԱՆ

Ո՛չ. դեռ քանի օր մենք պիտի տօնենք...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Գալիք վիճակիս անյայտութիւնը  
 Ինձ տասնապատիկ ծանրը է թւում  
 Քան իմ վիճակը: Ես կամենում եմ  
 Շուտով հանդիպել նորան:

ՏԻԳՐԱՆ

Քոյրիկըս...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Վըճուած եմ, այո՛, ես այսօր կերթամ:

ՏԻԳՐԱՆ

Բարի ձանապարհ: Ուրեմն երթամ  
 Հաղորդեմ այս լուրը և հրամայեմ  
 Ըսկսեն խնճոցք և խըրախճանիք  
 Շնորհաւորելու ձեր հարսանիքը: (Գնում է):

## ԵՐԵՒՈՅԹ ՎՊՅ

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԶԱՐՈՒՀԻ

ԶԱՐՈՒՀԻ

Այդ ֆնչ ես անում դու, Տիգրանուհի,  
 Երևակայիր ձվ է լինելու քո ամուսինը,  
 Մերացած, մարած այն զառամեայը.  
 Խոր կընճիռները արդէն ծաւել են  
 Նորա երեսին: Նա գերեզմանի  
 Մօտին է կանգնած: Միամտաբար  
 Ինքըդ քո կեանքով դու մի աւերիք  
 Երջանկութիւնըդ: Փոխիր վըճիռըդ,  
 Ես կարծում էի հընարաւոր է  
 Դարեւոր սօսին արմատով կորդել  
 Իւր պարարտ հողից, բայց Տիգրանուհուն  
 Անհընարին է պոկել ջըլատել  
 Իւր հայրենիքից:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Բազդի հարւածը

Միշտ անտանելի, ծանրը է թըւում,  
 Երբ զայիս է նա անգուշակելի,  
 Որքան էլ թեթեւ լինի հարւածը,  
 Ես արդէն հաշուում եմ վիճակիս հետ:  
 Կ'երթամ:

Կ'երթամ, բայց այնտեղ ուր ոչ մի բան  
 Ինձ չէ գրաւում, ես այնտեղ կապրեմ  
 Երևակայութեան մի ճոխ աշխարհում,  
 Որ բնաւ ըստոր չէ այս իրական  
 Առօրեայ կեանքից: Իմ հայրենիքի  
 Սիրելի պատկերը կը ներկայանայ  
 Առաւել շըքեղ, փայլուն գոյներով.  
 Յարատե կարօտը կը բազմապատկէ

Իսկական արժէքն առարկայի:  
 Քայց թէ անհրրաժեշտ է երբեմնապէս  
 Յընորքըն էլ իրականանան,  
 Կը տանեմ ինձ հետ հեռու Մարտտան  
 Յիշատակներ իմ հայրենիքից:

ԶԱՐՈՒՀԻ

Լըսիր ինձ, հոգիս:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Անգին Զարուհի, աղաչում եմ ես—  
 Զուր մի աշխատիլ դու ինձ համոզել—  
 Տիզրանին արդէն ես խօսք եմ տւել:  
 Կամայ, ակամայ ես պէտք է երթամ:  
 Ես չեմ կամենում  
 Իմ անձնական նեղ վայելքի համար  
 Սիրելի ազգըս հասցընել անկման:

ԶԱՐՈՒՀԻ

Անմեղ, միամիտ մի՛ լինիր այդքան,  
 Քո մի հատ խօսքից չէ կարող կորչել  
 Ամբողջ ժողովուրդ: Քեզ ինչ ասում եմ՝  
 Դու նորան լըսիր--ալուած խոստումըդ  
 Ետ կանենս շուտով:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Երբէք, Զարուհի,  
 Երթանք պատրաստենք: Այդպէս վէճերով  
 Միայն իրար սիրտ մենք կը պըղտորենք:

ԶԱՐՈՒՀԻ

Քո յաճառութիւնը Տիզրանուհի,  
 Նոր չէ ինձ յայտնի: Գընանք ուրեմըն:

(Գնում են):

# Տեսարան Գ.

Առաջին տեսարանի պատկերը

## ԵՐԵՒՈՅԹ IX

ՏԻԳՐԱՆ, ԽՈՐՀՐԴԱԿԻՑ, ՊԱՒԱՏԱԿԱՆՆԵՐ

ՏԻԳՐԱՆ (մտնելով)

Բոլորիդ համար թանկագին հիւրեր  
Ուրախալի լուր բերում եմ անս.  
Մեր քոյրըն արդէն համաձայնել է,  
Նա խնայել և եթ կը դաջ այստեղ:

ԲՈՒՈՐԵՔՆԱՆ

Կեցցէ Տիգրանուհի:

ՏԻԳՐԱՆ

Բայց նա ինձ յայտնեց իւր ցանկութիւնը  
Հենց այսօր և եթ  
Ճանապարհ ընկնել դէպի Մարաստան,  
Էլ մընալ այստեղ տօնախմբելու  
Արքայազայել իւր հարսանիքը  
Կըտրակի մերժեց: Քէ ինչու է նա  
Այդպէս կամենում, իւր զաղտնիքն է դա —  
Նորա վրձիւը քաջ յայտնի է ինձ,  
Հակառակ է ձեր և ժողովրդիս  
Եւ մեր ամենիս ցանկութիւններին:  
Բոլորեքեանքս  
Մենք կուզենայինք դեռ երկար խընդալ  
Եւ ուրախանալ տարաբախտաբար  
Նա չէ կամենում:

ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Հազար բերան փնփռարձրեալներին,  
Իմ ուրախութեան էլ չը կայ սահման  
Եւ հաստատ գիտեմ — իմ տիրոջ համար  
Աչքի ազիզ լոյս ես պիտի դառնամ:

ՏԻԳՐԱՆ

Սենեկապետին այստեղ կոչեցէք  
(մտնում է սենեկապետը)  
Խընճոյքի համար պատրմատ է արդէն  
Բացօդեայ, կանաչ մեր ճեմեկիքը:

ՍՆՆԵԿԱՊԵՏ

Շատ շուտով պատրաստ կը լինի արքայ:

ՏԻԳՐԱՆ

Գընան ուրե՛մբ: (Սենեկապետը գնում է)

ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Կարող թաղաւոր, ես, նւաստ ծառայ,  
Քո ոտների տակ այս չընչին փոշին,  
Գարձեալ մի խընդրանք պիտ մատուցանեմ  
Իմ թաղաւորից և ձեր գաշնակցի:  
Նա ազաւում էր

Յանուն ձեր վրե՛մ եզրայրսիրութեան,  
Մեծ օրիորդին ուղեկցել մինչև  
Մայրաքաղաքը, մեր Եկրատանը:  
Խըստապահանջ մի հըրովարտակով  
Հըրամալած է ամեն մէկի տան —  
Հարուստ լինի նա թէ յեաին աղքատ —  
Իւրաքանչիւրի

Տանիքից գորգեր, կապերաներ կախել,  
Եւ, քաղաքային դարպասից ըսկսած  
Մինչև արբունիք, բոլոր փողոցներն  
Մածկել զորգերով և կապերաներով

Օրինազանցը պիտի գըլխաուի  
 Իսկոյն, անյապաղ: Մեր առաջ կելնեն  
 Դիմաւորելու և Աժդահակը,  
 Եւ աւագանին և զօրայանները:  
 Եւ խոնարհ ծառայ այս նըպատակով  
 Արդէն բերած է երկուսիդ համար  
 Քաղաւորական ասպանոցիցը  
 Ամենաընտիր մի զոյգ երիվար.  
 Որ «արքայական աչքեր» են կոչոււմ  
 Կամ թէ «հրեղէն բնաւոր ձիեր»:

## ՏԻԳՐԱՆ

Շնորհակալ եմ —

Եղբայրական սէր և պարտքըն անշուշտ  
 Ձեզ հետ կը տանեն ինձ մինչև Հայոց  
 Մարաց սահմաններն և միայն այդքան:  
 Իսկ այնուհետև «բարի ճանապարհ»  
 Այնտեղ մաղթելով, ես ղէպի գահըս  
 Կը վերադառնամ, ուր ինձ կը կոչեն  
 Բազմաթիւ հոգսերըն կառավարութեան:  
 Ձի լինիլ քոյրըս, որին ես վըստահ  
 Ըստանձնում էի իմ երկըրների  
 Ղեկավարութիւնն, չը կայ արժանի  
 Իմ տեղակալըս, որ ինչպէս արթուն  
 Աչքաբաց արծիւ, սիրով պահպանում  
 Եւ խընամում էր իմ ժողովուրդըս,  
 Երբ պատերազմի բուռըն մըրըրիկը  
 Յափըշտակում էր ինձ իմ գահոյքից.  
 Այլ ևս չը կնջ իմ Տիգրանուհին...  
 Իմ հաւատարիմ աթուակիցը:

**ԵՐԵՒՈՅԹ X**

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԶԱՐՈՒՀԻ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՆԱԺԻՇՏՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Ահա իմ քոյրը և քո տիրուհին

ԽՈՐՀՐԳԱԿԻՑ (ՂԱԽԻ ՍՂՆՆ ԺՆԿԱՅՔ)

Զեր խոնարհ ծառան:

ՏԻԳՐԱՆ

Յարգելի ծերուկ, դու, որ իմ քրոջ առաջնորդն ես,

Մինչև Եկբատան ես քեզ եմ յանձնում

Սորան իմ ամբողջ եղբայրական սէրըն,

Իմ եղբայրական ամբողջ գորովը:

Անգին գոհար չեմ խըլում իմ թագից

Քո ձեռը տալիս, այլ կրթքիս տակից

Սիրտըս եմ պոկում և քեզ եմ յանձնում:

Իմ սրտից աւելի եմ ուզում սորան...

Խընամես սորան: Որպէս սիրելի,

Պաշտելի էր սա իւր հայրենիքում,

Նոյն սէրը դարձեալ և նոյն շարգանքը

Պիտի վայելէ ձեր հայրենիքում:

ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Մեր ասուածները մեզ լինեն վրկայ,

Ինչպէս դիցուհուն մենք պէտք է պաշտենք

Մեր մեծ Տիրուհուն-նոյնպիսի խորին

Ջերմեանդութեամբ և պատկառանքով

Նորա ըզգեստի վեշից կը համբուրենք,

Ինչպիսի խորին երկիւղածութեամբ

Մենք մօտենում ենք սուրբ ատուշանի

Վառ զոհարանին և համբուրում ենք

Նորա մի քանդակ կամ մի դրուագը:

Մեր թագաւորի զոյգ աչքը մի կողմ

Եւ դու, թագուհի, միւս կողմ մեզ համար:  
 Մենք բոլորեքեան հըլու հրպատակ,  
 Հընազանդ ենք քեզ, քո սուսերի տակ  
 Մեր պարանոցը, քո ձեռին դարձեալ  
 Մեր ողորմութիւն:

## ՏԻԳՐԱՆ

Սիրելի քոյրիկ:

Օ, ինչու սիրուն այդ ծաղկափունջը  
 Թըրջում ես այդպէս քո արտասուքով  
 Վերջին անգամ դու մեր շըրջանում—  
 Եւ այն էլ այդպէս: Միթէ սիրելի  
 Քո հայրենիքին և քո եղբորը ազի արտասուք  
 Դու պիտի թողնես վերջին չիշատակ:  
 Գոնէ մի անգամ խընդադէմ նայիր  
 Մեզ վերայ, քոյրիկ: Քո այդ թախիծը  
 Բոլորիս վերայ թախիծ է ընդում:  
 Տես բոլորեքեանըն էլ կորագըլուխ  
 Մըխիթարանան ձայնիդ են կարօտ:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Աղաչում եմ ես, ինձ չը մոռանաս  
 Սիրելի եղբայր: Եւ դու, Չարուհի,  
 Եւ դուք, յարգելի իմ ազգականներ,  
 Իսկ ես բոլորիդ պատկերն այստեղ կը պահեմ  
 Այստեղ իմ սըրտում մինչև իմ մահը:

## ԽՈՐՀՐԿԱԿՈՑ

Թագուհի,

Թէ իմանայիր, ինչ ըսքանչելի,  
 Դիւթական աշխարհ դու պիտի երթաս,  
 Կամ ինչ փառահեղ մի աստարեզ է  
 Առաջիդ բացւում, դու լալու տեղակ  
 Թւեր կուզէիր արագ թլուխէքով  
 Դէպի այն աշխարհը սըլանալու:

Կը տեսնես շուտով և ինքըզ անձամբ  
Գու կը հաստատես այն՝ ինչ խօսքերով  
Գրեւարանում է պատկերացընել  
Քո խոնարհ ծառան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ (մտնում է)

Խընճոյքի համար արդէն պատրաստ է  
Բոլորը, արքայ:

ՏԻԳՐԱՆ

Ուրեմըն երթանք,

Սիրելի հիւրեր:

(Գնում են):

(Կը շարունակուի)